

յուծիւն. ուրեմն ոչ միայն զքեզ Տէր կարգաւ պարտաւոր եմք, այլ և Աստուած և ստեղծող ճշմարտապէս դաւանիմք, ոչ մեզ և եթ, այլ և «հարցն», : Ի նախնի հարցն մերոց երկրպագեալ, և ճանաչեալ, ի նահապետաց և ի մարգարէից, յառաքելոց և ի վկայից. և որպէս երևի առեալ զայս սուրբ Ազնկեցի յօրհնութենէ երկից մանկանց յամենայն աւուր երգէ քաղցրաձայնութեամբ բերանով ուխտի մանկանց, որպէս թէ ասելով, ոչ միայն ի հին Խորայէլէ ես ծանօթացեալ, այլ և ի նորոյս. և որպէս նոքա խոստովանին թէ Աստուած ես հարցըն, Աբրահամու, Իսահակայ և Յակօբայ, պատշաճապէս երգեմք և մեք. յառաքելոց քարոզեալ, ի հայրապետաց դաւանեալ, և ի վկայից խոստովանեալ ճանաչեմք զճշմարտութիւն քո և հանապազ քարոզեմք զտէրութիւն քո ի վերայ ամենայն երկրի. ուստի յարէ «մերոց», ցուցեալ զընտանութիւն որպէս թէ ասելով, ո՞վ Տէր թէպէտ եմք բիւրապատիկ մեզօք լցեալք, և զանբարկանալիզ ի բարկութիւն շարժեալ, այլ ոչ յուսահատիմք և ոչ

խապառ յիտս դառնամք. այլ հայիմք ի բազմազթութիւն սիրոյ քո, և յողորմութեամբ ընտանութիւն քո ընդ հարցն մերոց. վասնորոյ համարձակապէս դիմեմք և կարդամք զքեզ ծանօթացեալք ի հարց մերոց, և խոստովանեալք յամենեցունց ասելով «Տէր Աստուած հարցն մերոց», : Ի սոյն բանիս ոչ յիտս նահանջիմք՝ այլ բոլորով սրտիւ խոստովանիմք, և ոչ գաղջանամք՝ ոչ ի յաջողութենէ և ոչ ի ձախորդութենէ. զի յաջող կեանք՝ ի քէն ողորմութեամբ շնորհի առ մեզ, և ձախող ելք՝ ի մեղաց և ի յանցանաց մերոց արդարապէս ժամանեալ. ուրեմն ընդ հասանել յաջող ելից, զբարերարութիւն քո խոստովանիմք փայլեալ ի մեզ. և ընդ երազել ձախորդութեանց, զքաւութիւն մերոց մեղաց՝ յառատ մարդասիրութիւն քո ապաւինեալ, խնդրեմք շնորհել, ըստ երկից մանկանց օրհնաբանութեանց. ապա զեղիցիկ հետեւեցուցանէ պաղատախառն հայցուածք ի դէպ ժամու օգնականութեան յասելն,

(Շորհանգիլի)

ՔՐԻՍՏՈՍ Ի ԴԵՏՆ ՅՈՐԴԱՆԱՆ.

Որ զԲարձրեղոյն քննես զխորս, սիւզ յիս շնչեա, Սուրբ Հոգի,
 Երգել ի լուր տիեզերաց զհրաշից Փրկչին Յիսուսի,
 Աւճ արարածք մշտամրմունջ որովբէական օրհնութեամբ
 Գովնն, և մեր բազկատարած ծունր ածեմք զօհնութեամբս
 Տուր ինձ՝ երգովք հրճուիլ ընդ հոյս փառաբանչացն անմահից,
 Եւ փրկութեան տօնել զայս օր Աստուածորդոյն կենսալից,
 Որ անթարգման կամք Ծնողին էջ Աստուածեանն ի գահէն,
 Անպարագիր ծնաւ մարմնով անշուք յայրին ի Կուսէն,
 Օրհնեալ է Տէր, որ քաղցր ակամբ յիւրն ի պատկեր ակնարկեաց,
 Եւ չար զաղէտ տեսեալ հոգոց մերոց, այլ ոչ հանդուրժեաց.

Յայնս զետոյն խոնարհեցաւ մեղացն զբիծ կամաւոր,
 Զնըկ, թափել զՏողինս յանյագ ի դժոխոցն ահաւոր,
 Հապա՛ զարթիր գետ Յորդանան ի ձայն յաւերժ օրհնութեան.

Զի ի քեզ Տէր տեսաք էկցս կիզիչ մեղաց Ադամեան,
 Տիեզերաց աւետաւոր խաղա՛ գնա՛ հանդարտիկ
 Նորաստեղծեալ այսօր աշխարհ, նոր և շնչեն սիւզք մեղմիկ,
 Սանձ և յուզմանցդ զիր կատարի, կոհակս սրբեալ հան ի վեր,

Ահա՛ նոր Արի յերկնից ի քեզ ճաճանչ ցայտէ ոսկեթել.
 Լուս, լուս լիցին և քոյդ ալիք, որ զիլ գնան ի զոր,
 Աստ գուշակաց հնչեն նուագք յաւիտենից դաշնաւոր:

Պանխազուշակ ձայն բարբառոց յանապատին — Յովհաննէս
 Քարոզ կարգայր ընդ Հրէաստան փութալ ի ջուր փրփրադէզ.
 Խուժան սաստիկ Յորդանանուն կանաչազգեստ խոնին յափ
 Եւ յամբողջոյն ջուր քաւութեան հայցեն, ջուր ցուրտ անապակ,

Օ՛ն, մկրտիլ կանխեաց Յիսուս Աստուածորդին կենսաբեր,
 Ի նոյն խորհուրդ կենդանարար հօտ իւր յերկինս վերածել.

Անդ և ստուերք տեղի ետուն մահու ի թափս անդոցոյ,
 Գոռ դաւածանն հեկեկալիր հառաչ եհան ի խորոց:

Բազուկք նորին նկուն եղեն մարդախողխողն ի զնուց.
 Այլ ոչ զօրեաց առնուլ հոգիս և արկանել դժոխոց.

Ողբ սրբոց երամովին սլացան յերկինս կոյս ի վեր,

Ինքըն միայն մնայր ի մութ տարտարոսին, բանտ յանել

Ընդարմանայր դուշակն ի լոյս անապական պատկերին,

Եւ մկրտել՝ զինքն անարժան կարծէր, զԱնձն այն Աուսածին.

Զահի՛ հարաւ, տեսեալ զՏէր նուաստ մերում ի կերպի,

Եւ գող ի գող աղերս արկեալ բազկատարած պաղատի

«Ինձ պիտոյ էր մաքրումն ի Քէն, որ սրբես զաղտ աշխարհի՛

Խոնարհութեամբ, բաբէ՛ սիրոյն, դու առ ի՞նչ դաս, Տէր երկնի.

Զքէն գուշակք անապական առնուլ ծնունդ ի Աուսէն

Չայնեցին մեզ զիւրդ ի քեզ ձեռք ամբարձցին հողեղէն,»

Այլ՝ որ զջուրն ի մաքրութիւն տիեզերաց զայր սրբել՝

Ոչ անխայեաց տալ պատասխան կարապետին ձգնասէր.

— «Թայլ տուր յայս վայր, ո՛ր Յովհաննէ, զի մեզ այսպէս վայել է

Լնուլ զողջոյն արդարութիւն,» . նոյն և ի գէտն մտանէ.

Տեսան յայնժամ հնազանդ Բանին ի զլուինս առեալ թափէր ջուր,

Լուայր ի վտակ արծաթափայլ զանհպելին յէից հուր.

Լուայր մարմինն անապական, գասուց սրբոց սրբութիւն,

Լուայր զիրանն բարձող խաչին առ ի մեղացն քաւութիւն.

Անդէն ալիք Յորդանիսին յետախուսեալ սրաւազ

Վիշապաձայն անցին ընդ ափս, վտակք զարթեան ի պատգամս.

Զարթեան յերգ նոր վայրք ցանկալիք հնոյ երկրին Աւետեաց,

Ցնծայր, կայտուէր և Պաղեստին ի լոյս յաւերժ հրձուանաց:

Ուրախութեան հնչեցան ձայնք ընդ ծով, ցամաք ամենայն,
 Եւ ի հրաշից Աստուածութեանն ի դող ել տունն Ողիմպեան.
 Պատառեցաւ, տեսիլ ահեղ, երկնից երկին կապուտակ,
 Զերտ արանի էջ Սուրբ Հոգին յիւր Էակիցն փառունակ:

Հայրն ի վերուստ վկայ յԱրդին կարգայր ի ձայն փարելի,
 «— Դա ծոցածին և միածին, դա սիրելի իմ Որդի.

Դորա բանից լուիցեն ազգք, ընդ որ իմ է հաճութիւն,

Ծնողիս կամօք էջ Դա յերկնից համայն ազանց քառութիւն»:

Ընդ բարբառոյն՝ արագաթե թռեալ համբան հաշտութեան
 Երկնի ընդ երկրի, և գունդագունդ զօրք լուսեղէն աննրման
 Հեղան յերկիր սաւառնաթե, պար բոլորեալ զեղաւոր
 Զորեքսրբեանն հնչեցին զօրհանրոց ի քնար երկնաւոր:

Ընդ և սպաս ածին ահիւ անմահ մարմնոյ Տէրունոյն,

Այլ նա յայժամ ի յանապատ փութայր անդէն ի գետոյն.

Իսկ Յովհաննէս սիրաբորբոք քարոզ կարգայր բազմութեան,

— «Մեմանուէլ ահա Աստուած դարուց հնչեալ յախտեան.

Ահա ձեզ Գառն Արրահամեան պատրաստ խաչին ի սեղան,

Ահա սա զին մըր փրկութեան, զոր քարոզեաց իմ բերան.

Բուրվառ սրտից ածէք դմա զծուխ ծխել օրհնութեան,

Որում երկինք՝ են զահ, աթու, երկիր՝ ոտից պատուանդան»:

Այլ ինձ՝ տուր Տէր, տուր Տէր Յիսուս, յառատ քոյոց պարգևաց,

Հոգւով քեզ զահ լինել յաւէտ հանգոյն ջուրցն հոսանաց.

Իրբև զցօղս կենսաշիթ հեղ յիս առատ քո շնորհ,

Եւ զիս հաղորդ արա փառաց սրբոյ դասուն երկնաւոր:

Ա՝՝՝՝ Սարկա՝՝՝՝ Ա՝՝՝՝՝՝ Փիլիպեանց.

Ի 6 Յունիւնի 1872 -ի.

Ի Բ՝՝՝՝:

ՆՈՒՆԻՐ

ԻՄ ՆՈՐԱՆԾԱՅ ԵՂԱՅՐԵՐԵՐԵՐ



Ընուրանալի է, որ Կրօնի ուսումը որ-
 չափ որ ամենահարկաւոր է մեր Հայ երե-
 խաներին՝ նոցա դաստիարակութեան աս-
 պարիզե մէջ, նոյնչափ ևս արժանի է նա
 առանձին ուշադրութեան և հոգատարու-
 թեան քան թէ միւս ուսանելի առարկա-
 ները, ոչ թէ այն պատճառաւ, որ նորա

ուսուցչութիւնը աւելի զժուար է, կամ
 նորա ուսուցչից պահանջում է ևս առա-
 ւել մեծամեծ զիտութիւններ և հմտու-
 թիւններ, ոչ, այլ այն պատճառաւ, որ
 կրօնը սրտի և կամքի գործ լինելով՝ հար-
 կաւոր են և նորա ուսուցչին սրտի զգա-
 յութիւն, կամքի ներքին համոզումն և



1266-54